# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*30 նոյեմբերի 2023թվականի N 1442*

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Տիգրան Մկրտչյանի 2022 թվականի հուլիսի 14-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 20228WZ6GV ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2023 թվական նոյեմբերի 13-ի թիվ 80 մասնագիտական եզրակացությունը.

## <u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝</u>

1.Հրազդան համայնքին պատկանող Հարավային թաղամասում գտնվող 07-001-0628-0001 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս 12/9:
2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վ. Աղբյուրակ փողոցի 7 տան բնակիչ Տիգրան Մկրտչյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի 12/9 հասցեում գտնվող 25.41քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական:
3.Ավտոտնակը և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված 25.41 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

30 նոյեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*30 նոյեմբերի 2023թվականի N 1443*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Աշխեն Մկրտչյանի լիազորված անձ Վիգեն Մկրտչյանի 2021 թվականի հոկտեմբերի 14-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023DLSTA8 ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2023 թվական նոյեմբերի 13-ի թիվ 82 մասնագիտական եզրակացությունը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝*

1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 07-001-0509-0002 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 243/7:
2.Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Աշխեն Մկրտչյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 243/7 հասցեում գտնվող 39.55քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական:
3.Ավտոտնակը  և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված  21.73 քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

30 նոյեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*30 նոյեմբերի 2023թվականի N 1444*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՈՄՊՐԵՍԱՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀԱՐԹԱԿՆԵՐԻ, ՋՐԱՎԱԶԱՆԻ, ՀԵՆԱՊԱՏԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Հայկ Թովմասյանի 2022 թվականի մարտի 16-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2022MMH1CK ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2023 թվական նոյեմբերի 13-ի թիվ 84 մասնագիտական եզրակացությունը.

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝</u>*

1.Հրազդան համայնքին պատկանող Հրազդան քաղաքում գտնվող 07-001-0077-0029 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հրազդան-Լեռնանիստ խճուղի 9:
2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ա. Երկաթի փողոցի 1-ին նրբանցքի 7 տան բնակիչ Հայկ Թովմասյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան-Լեռնանիստ խճուղի 9 հասցեում գտնվող 31.33քմ արտաքին մակերեսով հասարակական նպատակային նշանակության կոմպրեսատորային կայանը, 156.17քմ արտաքին մակերեսով հասարակական նպատակային նշանակության օժանդակ շինությունը, 21.23քմ արտաքին մակերեսով, 22.31քմ արտաքին մակերեսով և 6.76քմ արտաքին մակերեսով հասարակական նպատակային նշանակության հարթակները, 7.53քմ արտաքին մակերեսով հասարակական նպատակային նշանակության

ջրավազանը և 8.02քմ արտաքին մակերեսով հասարակական նպատակային նշանակության հենապատը ճանաչել օրինական:

3.Կոմպրեսատորային կայանը, օժանդակ շինությունը, հարթակները, ջրավազանը, հենապատը և դրանց սպասարկման ու պահպանման համար նախատեսված 1559.4քմ մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

30 նոյեմբերի 2023թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*30 նոյեմբերի 2023թվականի N 1445*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Բորիս Մարտիրոսյանի 2021 թվականի նոյեմբերի 17-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023XNRJAL ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2023 թվական նոյեմբերի 13-ի թիվ 85 մասնագիտական եզրակացությունը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 07-001-0508-0001 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 114/1:
2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 114 շենքի 33 բնակարանի բնակիչ Բորիս Մարտիրոսյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 114/1 հասցեում գտնվող 50.93քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական:
3.Ավտոտնակը և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված 26.24քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

30 նոյեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*30 նոյեմբերի 2023թվականի N 1446*

### ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 208-Ն որոշման հավելվածը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի և իրացման՝ 5/հինգ/ հատ, 2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 4 /չորս/ հատ,
3)հանրային սննդի կազմակերպում և իրականացում՝ 1 /մեկ/ հատ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

30 նոյեմբերի 2023թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2023 թ. նոյեմբեր 30-ի
N 1446 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ, գովազդի մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ա/Ձ «Մարիամ Խաչատրյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 15/28 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 6-րդ փող., թիվ 37 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 2. | Ա/Ձ «Մարիամ Խաչատրյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 15/28 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 6-րդ փող., թիվ 37 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 3. | Ա/Ձ «Աննա Մկրտչյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 18/13 | Գ. Լեռնանիստ1-ին փող., թիվ 24/1 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 4. | Ա/Ձ «Աննա Մկրտչյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 18/13 | Գ. Լեռնանիստ1-ին փող., թիվ 24/1 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 5. | Ա/Ձ «Արտակ Գևորգյան» | Գ. Քաղսի 13/16 | Գ. Քաղսի 11-րդ փող., 2/2 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 6. | Ա/Ձ «Արտակ Գևորգյան» | Գ. Քաղսի 13/16 | Գ. Քաղսի 11-րդ փող., 2/2 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 7. | Ա/Ձ «Անուշ Բալաբեկյան» | Ք. Հրազդան, Չարենցի փող., տուն 20 | Ք. Հրազդան, Սպանդարյան 78 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8. | Ա/Ձ «Անուշ Բալաբեկյան» | Ք. Հրազդան, Չարենցի փող., տուն 20 | Ք. Հրազդան, Սպանդարյան 78 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 9. | «Բելլովո» ՍՊԸ | Ք. Հրազդան, Վանատուր թ-ս, տուն 491 | Ք. Հրազդան, Միկրոշրջան 4-րդ փող., թիվ 23 | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | 500 և ավելի քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 10. | «Բելլովո» ՍՊԸ | Ք. Հրազդան, Վանատուր թ-ս, տուն 491 | Ք. Հրազդան, Միկրոշրջան 4-րդ փող., թիվ 23 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | 500 և ավելի քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*30 նոյեմբերի 2023թվականի N 1447*

### ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն անտառային կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Վարդան Սարգսյանի 2023 թվականի նոյեմբերի 10-ի N Ե/3/1739-23 գրությունը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Սոլակ գյուղում գտնվող 07-060-0546-0001 ծածկագրով անտառային հողի 0.2379հա մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Սոլակ, Երևան-Սևան մայրուղի, 39-40կմ 9:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

30 նոյեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*30 նոյեմբերի 2023թվականի N 1448*

ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Ռոբերտ Հովհաննիսյանի լիազորված անձ Առնակ Ալեքսանյանի 2023 թվականի նոյեմբերի 22-ի դիմումը.

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝</u>*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 69 տան բնակիչ Ռոբերտ Հովհաննիսյանին ժառանգության իրավունքով փոխանցված (ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2023 թվականի նոյեմբերի 6-ին) Հրազդան քաղաքի Կոլխոզնիկների 67 հասցեում գտնվող գույքի հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Գ. Նարեկացու փողոց 67 հասցեով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

30 նոյեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*30 նոյեմբերի 2023թվականի N 1449*

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Վարդան Գրիգորյանի 2023 թվականի նոյեմբերի 22-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 98 շենքի թիվ 17 բնակարանի բնակիչ Վարդան Գրիգորյանին ժառանգության իրավունքով փոխանցված (ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2023 թվականի նոյեմբերի 22-ին) Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 98 շենքին հարող տարածք թիվ 16 հասցեում գտնվող հողամասի հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 98/16 հասցեով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

30 նոյեմբերի 2023թ.
ք.Հրազդան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ու Մ*

*04 դեկտեմբերի 2023թվականի N 1450*

### ԳԱՅԱՆԵ ՍԵՐԳՈՅԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 9-ի N144 որոշման հավելվածը և 2023 թվականի նոյեմբերի 23-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N6 արձանագրությունը.

## *Ո Ր Ո Շ Ու Մ   Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 55/43 հասցեում գտնվող 07-001-0458-0138 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.0024հա մակերեսով հողամասը 1 925 000 (մեկ միլիոն ինը հարյուր քսանհինգ հազար) դրամ արժեքով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 91 շենքի թիվ 76-77 բնակարանի բնակիչ Գայանե Սերգոյի Մուրադյանին՝ ավտոտնակ կառուցելու նպատակով:

2.Աճուրդով ձեռք բերված 0.0024հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3.Պարտավորեցնել Գայանե Սերգոյի Մուրադյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

04 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*04 դեկտեմբերի 2023թվականի N 1451*

### ՄԻՔԱՅԵԼ ՎԻՐԱԲԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N165 որոշման հավելվածը և 2023 թվականի նոյեմբերի 24-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N1 արձանագրությունը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Զորավար Անդրանիկի պողոտա 76/2 հասցեում գտնվող 07-001-0517-0024 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման 2.768հա մակերեսով հողամասը 111 550 000 (մեկ հարյուր տասնմեկ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) դրամ արժեքով օտարել Կոտայքի մարզի Ծաղկաձոր, Մարմարիկ 9 փողոց թիվ 15 տան բնակիչ Միքայել Վիրաբի Միքայելյանին՝ առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենք կառուցելու նպատակով:

2.Աճուրդով ձեռք բերված 2.768հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3.Պարտավորեցնել Միքայել Վիրաբի Միքայելյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*04 դեկտեմբերի 2023թվականի N 1452*

**ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԷ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*04 դեկտեմբերի 2023թվականի N 1453*

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 208-Ն որոշման հավելվածը.

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝</u>*

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի և իրացման՝ 1/մեկ/ հատ,
2)համայնքի վարչական տարածքում տեխնիկական հեղուկների վաճառք՝ 1 /հատ/,
3) համայնքի վարչական տարածքում լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի, հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառք՝ 1 /մեկ/ հատ,
4)ժամը 24-00-ից հետո աշխատանք՝ 1 /մեկ/ հատ,
5)հանրային սննդի կազմակերպում և իրականացում՝ 1 /մեկ/ հատ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2023 թ. դեկտեմբեր 04-ի
N 1453 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ, գովազդի մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | « Հայկ Շին» ՍՊԸ | Ք. Հրազդան, Պ. Ադամյան փողոց, տուն 65 | Ք. Հրազդան, Երևան-Սևան մայրուղի 46-47 կմ 3 | հեղուկ վառելիքի, հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառք | լցակայան՝ հիմնական շինություն | 2023 թվականի դեկտեմբեր ամսվա համար |
| 2. | « Հայկ Շին» ՍՊԸ | Ք. Հրազդան, Պ. Ադամյան փողոց, տուն 65 | Ք. Հրազդան, Երևան-Սևան մայրուղի 46-47 կմ 3 | ժամը 24-00-ից հետո աշխատանք | լցակայան՝ հիմնական շինություն | 2023 թվականի դեկտեմբեր ամսվա համար |
| 3. | Ա/Ձ «Նարինե Մխիթարյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 4-րդ փողոց, շենք 24 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 4-րդ փողոց, շենք 25 | տեխնիկական հեղուկների վաճառք | հիմնական շինություն | 2023 թվականի տարվա համար |
| 4. | Ա/Ձ «Սոնյա Առաքելյան» | Ք. Հրազդան, Վանատուր թ-ս, տուն 402 | Ք. Հրազդան, Վանատուր թ-ս, Զ. Անդրանիկի 58/4 | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 5. | Ա/Ձ «Սոնյա Առաքելյան» | Ք. Հրազդան, Վանատուր թ-ս, տուն 402 | Ք. Հրազդան, Վանատուր թ-ս, Զ. Անդրանիկի 58/4 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*04 դեկտեմբերի 2023թվականի N 1454*

## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի N 776 ՈՐՈՇՄԱՄԲ ՏՐՎԱԾ N 82 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումով, հիմք ընդունելով «ԷՅ ՋԻ ԹԻ ՓՐՈՋԵՔԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից փոփոխված աշխատանքային նախագիծը և Ջիվան Վարդանյանի, Նառա Աթոյանի 2023 թվականի նոյեմբերի 28-ի դիմումը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝*

1.Հրազդան համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 18-ի «Նախագծային փաստաթղթերը համաձայնեցնելու և շինարարության թույլտվություն տալու մասին» N 776 որոշմամբ տրված N 82 շինարարության թույլտվության 4-րդ կետում «(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)» տողում լրացնել « «ԷՅ ՋԻ ԹԻ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ» բառերը, իսկ «(նշել իրավասու մարմնի անվանումը)» տողում՝ «ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ» բառերը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*04 դեկտեմբերի 2023թվականի N 1455*

## ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Արամ Ալեքսանյանի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կաքավաձոր թաղամասի 2-րդ շենքի թիվ 42 բնակարանի բնակիչ Արամ Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 1332518, տրված՝ 2005 թվականի նոյեմբերի 15-ին/ Հրազդան քաղաքի Կաքավաձոր թաղամասում գտնվող կիսակառույց բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կաքավաձոր թաղամասի 1-ին փողոց 3/1:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## ՈՐՈՇՈՒՄ

*04 դեկտեմբերի 2023թվականի N 1456*

### ԴԵՂԱՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Գագիկ Ալեքսանյանի 2023 թվականի սեպտեմբերի 27-ի դիմումը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.<<ՀԱՅԿ ԴԵՂԱՏՈՒՆ>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 26092023-07-0142, գաղտնաբառ՝ BBDHW7M7YWBA/ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 33 շենք հասցեում գտնվող դեղատանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամասի Օգոստոսի 23-ի փողոց 38/7:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*04 դեկտեմբերի 2023թվականի N 1457*

ՇԻՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԻՆ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Արմեն Առաքելյանի 2023 թվականի հոկտեմբերի 9-ի դիմումը.

*<u>Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝</u>*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Չարենցի փողոց թիվ 3 տան բնակիչ Արմեն Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 16082023-07-0166, գաղտնաբառ՝ U1VIHQIM8ENI/ Հրազդան քաղաքի Սպանդարյան փողոց 49 հասցեում գտնվող շինության 0.00815հա մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Ս. Սպանդարյան փողոց 49/4, իսկ 0.02155հա մակերեսով մասինը թողնել նույնը՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Ս. Սպանդարյան փողոց 49:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

04 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*04 դեկտեմբերի 2023թվականի N 1458*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Ավետիք Հարությունյանի 2023 թվականի նոյեմբերի 23-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 141 տան բնակիչ Ավետիք Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 2154753, տրված՝ 2006 թվականի մարտի 24-ին/ Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամասի Պուրակային փողոց, 12-րդ նրբանցք 14:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*04 դեկտեմբերի 2023թվականի N 1459*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Գագիկ Շահրամանյանի 2023 թվականի նոյեմբերի 23-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 98 շենքի թիվ 10 բնակարանի բնակիչ Գագիկ Շահրամանյանին պատկանող (2023 թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից տրված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, գրանցված գրանցամատյանում 4936) Հրազդան քաղաքի Հարավային թաղամասում գտնվող հողամասին (ծածկագիր՝ 07-001-636-082) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս 282/8:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

### *Ո Ր Ո Շ Ու Մ*

*04 դեկտեմբերի 2023թվականի N 1460*

### ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով.

*Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝*

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 34.4քմ մակերեսով 07-001-0173-0009 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Գործարանային փողոց 7/3:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**     **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

04 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*04 դեկտեմբերի 2023թվականի N 1461*

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 65-րդ հոդվածով.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

1.2023 թվականի դեկտեմբերի 7-ին՝ ժամը 13:30-ին, հրավիրել Հրազդան համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ ելնելով քննարկվող հարցի հրատապությունից:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*04 դեկտեմբերի 2023թվականի N 1462*

### ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Վահագն Ալեքսանյանի 2023 թվականի նոյեմբերի 24-ի դիմումը.

*<u>Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝</u>*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կճռո թաղամասի թիվ 5Բ տան բնակիչ Վահագն Ալեքսանյանին ժառանգության իրավունքով փոխանցված (ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2022 թվականի մարտի 11-ին) Հրազդան քաղաքի Կճռո թաղամաս, 5Բ հասցեում գտնվող բնակելի տան (ծածկագիր՝ 07-001-0019-0003) հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս 155/4 հասցեով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

04 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*04 դեկտեմբերի 2023թվականի N 1463*

### ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Ռաֆիկ Հարությունյանի 2023 թվականի նոյեմբերի 16-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 111 շենքի թիվ 35 բնակարանի բնակիչ Ռաֆիկ Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2478961, տրված՝ 2007 թվականի սեպտեմբերի 12-ին) Հրազդան քաղաքի Միկրոշրջան Գ-1 թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամասի 9-րդ փողոց 21/6:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ու Մ*

*04 դեկտեմբերի 2023թվականի N 1464*

## ԷԴՈՒԱՐԴ ԱՐՇԱԿԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնում նախապատրաստված նյութերի հիման վրա: Ոստիկանության Հրազդանի բաժնի ՀՈԲ տեսուչ, ոստիկանության լեյտենանտ Գ. Բարբարյանի կողմից կազմված արձանագրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 222 շենքի 37 բնակարանի բնակիչ՝ Էդուարդ Արշակի Թորոսյանը, Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 219 շենքի հարևանությամբ՝ համայնքային սեփականություն համարվող հողամասի վրա, կառուցել է ինքնակամ շինություն և վերջինիս արարքում առկա են վարչական իրավախախտման տարրեր են պարունակում:

Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցվել է Էդուարդ Արշակի Թորոսյանը, ապահովվել է վերջինիս արտահայտվելու և լսված լինելու իրավունքը: Իրավախախտում կատարողը վարչական վարույթի ընթացքում հայտնել է, որ ինքնակամ շինությունը կառուցվել է իր կողմից դեռևս 2021 թվականի աշնանը, հավելել, որ զղջում է կատարած արարքի համար և խնդրել հնարավորինս մեղմ պատիժ նշանակել: Օրենսդրությամբ հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր փաստական հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում, որ կատարվել է իրավախախտում, որի համար պատասխանատու է Էդուարդ Թորոսյանը: Ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Էդուարդ Թորոսյանը իրավախախտումը կատարել է 2021 թվականի աշնանը և վարչական վարույթի շրջանակներում դրան հակասող այլ ապացույցներ չեն հայտաբերվել, վարչական մարմինը հիմք է ընդունում իրավախախտում կատարելու պահին գործող՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի խմբագրությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ

կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով: (...) Հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

«Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 8-րդ, 32-րդ հոդվածներով, իրավահարաբերության պահին գործող 154-րդ հոդվածով, 2191-րդ և 305-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N 75 արձանագրությունը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1. Էդուարդ Թորոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակել տուգանք 400.000 / չորս հարյուր հազար / դրամ գումարի չափով:
2. Տուգանքի վճարումը կատարել սույն որոշման ստացման պահից 15-օրյա ժամկետում հետևյալ հաշվեհամարով՝ 900125001488:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ որոշման վերաբերյալ իրազեկվելու պահից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդուարդ Թորոսյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

04 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*05 դեկտեմբերի 2023թվականի N 1465*

### ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով Հեղինե Ռուստամյանի 2023 թվականի նոյեմբերի 13-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1. Հրազդանի համայնքապետարանի 900125001140 հաշվեհամարին որպես հողամասի կադաստրային արժեք վճարված 13900 /տասներեք հազար ինը հարյուր/ դրամ գումարը հետ վերադարձնել Հրազդան քաղաքի Երևանյան փողոց 44 շենքի 6 բնակարանի բնակչուհի Հեղինե Ռաֆիկի Ռուստամյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

05 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*05 դեկտեմբերի 2023թվականի N 1466*

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 208-Ն որոշման հավելվածը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 5 /հինգ / հատ,
2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 5 /հինգ / հատ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

05 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2023 թ. դեկտեմբեր 05 -ի
N 1466 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանակն անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ, գովազդի մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ա/Ձ «Լավուրա Վարդանյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 230/14 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, 75ա շենք | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 2. | Ա/Ձ «Լավուրա Վարդանյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 230/14 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, 75ա շենք | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 3. | Ա/Ձ «Վարդուհի Գալստյան» | Ք. Հրազդան, Վանատուր թ-ս, տուն 405 | Ք. Հրազդան, Վանատուր թ-ս, տուն 405 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 4. | Ա/Ձ «Վարդուհի Գալստյան» | Ք. Հրազդան, Վանատուր թ-ս, տուն 405 | Ք. Հրազդան, Վանատուր թ-ս, տուն 405 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 5. | Ա/Ձ «Հակոբ Դարմանյան» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, 25/4 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, շենք 33, 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 6. | Ա/Ձ «Հակոբ Դարմանյան» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, 25/4 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, շենք 33, 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 7. | Ա/Ձ «Նորայր Ղազարյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 240/15 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 240շենքին հարող | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | տարածք | | | |
| 8. | Ա/Ձ «Նորայր Ղազարյան» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 240/15 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 240շենքին հարող տարածք | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 9. | Ա/Ձ «Մելանյա Միքայելյան» | Ք. Հրազդան, Կոճոռ թ-ս, տուն 41 | Ք. Հրազդան, Կոճոռ թ-ս, տուն 41 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |
| 10. | Ա/Ձ «Մելանյա Միքայելյան» | Ք. Հրազդան, Կոճոռ թ-ս, տուն 41 | Ք. Հրազդան, Կոճոռ թ-ս, տուն 41 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2023 թվականի չորրորդ եռամսյակի համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*05 դեկտեմբերի 2023թվականի N 1467*

ԱՅԳԵՏՆԱԿԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Գայանե Արծրունու Տեր-Մարտիրոսյանի լիազորված անձ Արայիկ Հովսեփյանի 2023 թվականի նոյեմբերի 23-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝*

1.Երևան քաղաքի Կենտրոն, Տերյան փողոց, 62 շենք, թիվ 7 բնակարանի բնակիչ Գայանե Արծրունու Տեր-Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 1178438, տրված՝ 2002 թվականի դեկտեմբերի 19-ին/ Հրազդան քաղաքի Աղբյուրակ այգեգործական զանգվածում գտնվող այգետնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վերին Աղբյուրակ այգեգործական զանգվածի 3-րդ փողոց 37:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

05 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*05 դեկտեմբերի 2023թվականի N 1468*

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածով և Կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N1146-Ն որոշման պահանջներով.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Հրազդան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի, (այսուհետ՝ ՏԱՊ), նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:
2.Հաստատել Հրազդան համայնքի ՏԱՊ-ի նախագծի վերաբերյալ կազմակերպվող քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:
3.Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի գնումների և զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ - զարգացման ծրագրերի պատասխանատու Վանուհի Բարեղամյանին:
4.Հանձնարարել գնումների և զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ - զարգացման ծրագրերի պատասխանատու Վանուհի Բարեղամյանին՝ ապահովել համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում Հրազդան համայնքի ՏԱՊ-ի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերի տեղադրումը, ինչպես նաև համայնքի բնակիչներին օրենքով սահմանված կարգով իրազեկելը:
5.Սույն որոշման կատարումն ու պատասխանատվությունը դնել գնումների և զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ - զարգացման ծրագրերի պատասխանատու Վանուհի Բարեղամյանի վրա:
6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Ռոբերտ Դանիելյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

05 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

Հավելված

Հրազդան համայնքի ղեկավարի
2023 թվականի դեկտեմբերի 05-ի
№1468 որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Սույնով Հրազդանի համայնքապետարանը հրավիրում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2023 թվականի դեկտեմբերի 7-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 22-ը ներառյալ կազմակերպվող Հրազդան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակված Հրազդան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները կարող են մինչև 2023 թվականի դեկտեմբերի 21-ը ներառյալ ուղարկել info@hrazdan.am էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև գրավոր ներկայացնել Հրազդանի համայնքապետարան:

Հանրային քննարկումների ընթացքում՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ժամը 15:00-ին Հրազդան, Կենտրոն Սահմանադրության հրապարակ 1, Վարչական շենքի հինգերորդ հարկում տեղի կունենան հանրային բաց լսումներ:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 060-704051 հեռախոսահամարով:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*05 դեկտեմբերի 2023թվականի N 1469*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ՊԱՐՍՊԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Ռուբիկ Զաքարյանի 2023 թվականի հունիսի 21-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 202342XE2H ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2023 թվական նոյեմբերի 20-ի թիվ 87 մասնագիտական եզրակացությունը.

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝</u>*

1.Հրազդան համայնքին պատկանող Հարավային թաղամասում գտնվող 07-001-0025-0025 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս, Ս. Շահումյան փողոց 69/1:
2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Շահումյան փողոցի 69 տան բնակիչ Ռուբիկ Զաքարյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Հարավային թաղամաս Ս. Շահումյան փողոց 69/1 հասցեում գտնվող 3.82քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության ավտոտնակը և 2.22քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության պարիսպը ճանաչել օրինական:
3.Ավտոտնակը, պարիսպը և դրանց սպասարկման ու պահպանման համար նախատեսված 18.5քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

05 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*05 դեկտեմբերի 2023թվականի N 1470*

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Վանիկ Եգորյանի 2023 թվականի հունիսի 12-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023UVBRK5 ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2023 թվական նոյեմբերի 20-ի թիվ 86 մասնագիտական եզրակացությունը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝*

1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 07-001-0146-0001 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 88/31:
2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 88 շենքի 4 բնակարանի բնակիչ Վանիկ Եգորյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 88/31 հասցեում գտնվող 32.6քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական:
3.Ավտոտնակը և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված 32.6քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

05 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*05 դեկտեմբերի 2023թվականի N 1471*

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Վարսիկ Եփրեմյանի 2023 թվականի ապրիլի 25-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱԶ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023HX5V8K ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2023 թվական նոյեմբերի 20-ի թիվ 90 մասնագիտական եզրակացությունը.

*<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝</u>*

1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 07-001-0506-0001 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 3-րդ փողոց 416:
2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 108 շենքի 31 բնակարանի բնակիչ Վարսիկ Եփրեմյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց 416 հասցեում գտնվող 61.0քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական:
3.Ավտոտնակը և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված 33.9քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

05 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*05 դեկտեմբերի 2023թվականի N 1472*

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Գեղեցիկ Հարությունյանի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023RAWAAA ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2023 թվական նոյեմբերի 20-ի թիվ 91 մասնագիտական եզրակացությունը.

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝</u>*

1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 07-001-0106-0001 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 64/7:
2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 65 շենքի 27 բնակարանի բնակիչ Գեղեցիկ Հարությունյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 64/7 հասցեում գտնվող 55.2քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական:
3.Ավտոտնակը և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված 27.6քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

05 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*05 դեկտեմբերի 2023թվականի N 1473*

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Ռազմիկ Հարությունյանի 2022 թվականի հոկտեմբերի 25-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 20235VUCYE ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2023 թվական նոյեմբերի 20-ի թիվ 93 մասնագիտական եզրակացությունը.

## *<u>Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝</u>*

1.Հրազդան համայնքին պատկանող Վանատուր թաղամասում գտնվող 07-001-0327-0046 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս 2/31:
2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի 2 շենքի 3 բնակարանի բնակիչ Ռազմիկ Հարությունյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի 2/31 հասցեում գտնվող 35.25քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական:
3.Ավտոտնակը և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված 35.25քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ                Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

05 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*05 դեկտեմբերի 2023թվականի N 1474*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ, ՊԱՐՍՊԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ մասով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Շահեն Նահապետյանի 2022 թվականի մարտի 15-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2022CHJBVI ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2023 թվական նոյեմբերի 20-ի թիվ 89 մասնագիտական եզրակացությունը.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին պատկանող Կաքավաձոր թաղամասում գտնվող 07-001-0234-0022 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կաքավաձոր թաղամաս 21/1:
2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կաքավաձոր թաղամասի 54 տան բնակիչ Շահեն Նահապետյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Կաքավաձոր թաղամաս 21/1 հասցեում գտնվող 23.78քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության անասնաշենքը և 3.05քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության պարիսպը ճանաչել օրինական:
3.Հրազդան համայնքին պատկանող Կաքավաձոր թաղամասի 21/1 հասցեում գտնվող 50.7քմ ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը

բնակավայրերի այլ հողերից փոփոխել բնակելի կառուցապատման:
4.Անասնաշենքըը, պարիսպը և դրանց սպասարկման ու պահպանման համար նախատեսված 50.7քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

05 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*05 դեկտեմբերի 2023թվականի N 1475*

### ՄԻԱՎՈՐՎԱԾ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ԵՎ ԴՌԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ , 8-րդ բաժինների պահանջներով, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով 2023 թվականի հուլիսի 27-ին «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված շինության հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 20234LGRYU ծածկագիրը և Արևշատ Հովհաննիսյանի 2023 թվականի հուլիսի 28-ի դիմումը.

## *<u>Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝</u>*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Հայ ֆիդայիների փողոց թիվ 16 տան բնակիչ Արևշատ Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի վկայականներ N 2631462, տրված՝ 2009 թվականի դեկտեմբերի 9-ին, N 1083000, տրված՝ 2005 թվականի հունվարի 13-ին և N 397644, տրված՝ 2001 թվականի օգոստոսի 22-ին) Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի Հայ ֆիդայիների փողոց 16, Հայ ֆիդայիների փողոց 16/2 և Հայ ֆիդայիների փողոց 14 հասցեներում գտնվող միավորված գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հայ ֆիդայիների փողոց 14:
2.Օրինական ճանաչել Հրազդան քաղաքի Հայ ֆիդայիների փողոց թիվ 16 տան բնակիչ Արևշատ Միշայի Հովհաննիսյանի կողմից Հրազդան քաղաքի Հայ ֆիդայիների փողոց 14 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող (սեփականության իրավունքի վկայականներ N 2631462, տրված՝ 2009 թվականի դեկտեմբերի 9-ին, N

1083000, տրված՝ 2005 թվականի հունվարի 13-ին և N 397644, տրված՝ 2001 թվականի օգոստոսի 22-ին) բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 110.1քմ արտաքին մակերեսով ավտոտեխսպասարկման կետը՝ օրինականացման վճարը սահմանել 433 600 (չորս հարյուր երեսուներեք հազար վեց հարյուր) դրամ, ինքնակամ բացված երկու պատուհանները՝ օրինականացման վճարը սահմանել 4 000 (չորս հազար) դրամ, ինքնակամ բացած մեկ դուռը՝ օրինականացման վճարը սահմանել 2 000 (երկու հազար) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504 գանձապետական հաշվին:

3.Կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

05 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*05 դեկտեմբերի 2023թվականի N 1476*

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N 1378 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Հրազդան համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 20-ի «Բնակելի տան բաժանվող մասին հասցե տրամադրելու մասին» N 1378 որոշման առաջին կետում <<18/1>> թիվը փոխարինել <<81/1>> թվով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

05 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*06 դեկտեմբերի 2023թվականի N 1477*

### ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Արտաշ Գրիգորյանի 2023 թվականի նոյեմբերի 17-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 122Ա շենքի թիվ 15 բնակարանի բնակիչ Արտաշ Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27062023-07-0206, գաղտնաբառ՝ CAC9IMMTEPMG/ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 112 շենքին հարող տարածքում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 122/70:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

06 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*06 դեկտեմբերի 2023թվականի N 1478*

### ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Վանիկ Հարությունյանի 2023 թվականի նոյեմբերի 27-ի դիմումը.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 75 շենքի թիվ 21 բնակարանի բնակիչ Վանիկ Հարությունյանին ժառանգության իրավունքով փոխանցված /ՀՀ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտարի կողմից 2023 թվականի նոյեմբերի 23-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում՝ թիվ 4966, ժառանգական գործ՝ 213/ Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամասում գտնվող հողամասին (ծածկագիր՝ 07-001-411-028) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մաքրավան թաղամասի Տիգրան Մեծի փողոց, 2-րդ նրբանցք 1:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

06 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*06 դեկտեմբերի 2023թվականի N 1479*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Լյովա Բարբարյանի 2023 թվականի նոյեմբերի 28-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 124 շենքի թիվ 32 բնակարանի բնակիչ Լյովա Բարբարյանին պատկանող /այգեգործի անդամատոմս N 536, տրված՝ 1990 թվականի օգոստոսի 16-ին/ Հրազդան քաղաքի Աղբյուրակ թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վերին Աղբյուրակ այգեգործական զանգվածի 4-րդ փողոց 21:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

06 դեկտեմբերի 2023թ.
ք.Հրազդան